Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2011 թվականի առաջին կիսամյակում քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2011 թվականի առաջին կիսամյակում քաղաքացիներից ստացվել է 764 նամակ, որից 780-ը՝ աջակցության խնդրանքով, 12-ը՝ բողոք, 4-ը՝ առաջարկություն, 2-ը՝ հարցում:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 35 դիմումներից 31-ին տրվել են սպառիչ պատասխաններ: Հողօգտագործման և հողհատկացման վերաբերյալ 8 դիմումներից 5-ին տրվել է դրական լուծում կամ, գործող կարգի համաձայն, ներկայացվել է ՀՀ կառավարություն: Աշխատանքի տեղավորման և հաշվառման մասին 34 դիմումներից դրական լուծում է ստացել 8-ը, 13 դիմումների վերաբերյալ մարզպետի կողմից միջնորդություններ են ներկայացվել համապատասխան կազմակերպություններ՝ աշխատանքի տեղավորման հարցում օժանդակելու խնդրանքով, մյուսները՝ հաշվառվել են:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 43 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 396 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 328 քաղաքացիների: Անվճար բուժսպասարկման խնդրանքով դիմած 49 քաղաքացիներից բավարարվել է 46-ի խնդրանքը, 16 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագրի տրամադրման միջնորդություն, 50 հոգու տրվել է առողջարանային բուժման ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2011թվականի առաջին կիսամյակում կատարվել է 215 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են քաղաքացիների արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
/2011թ.առաջին կիսամյակ/

	I եռ.	II եռ.	1-ին կիս.
1. Ստացվել են նամակներ ընդամենը -	349	415	764
որից՝			
աջակցություն	339	407	746
առաջարկություն	3	1	4
հարցում	2	-	2
բողոք	5	7	12
այդ թվում՝			
կրկնակի	1	2	3
կոլեկտիվ	1	1	2
2. Ըստ հարցի բնույթի՝			
բնակարանային	7	5	12
կոմունալ-կենցաղային	4	9	13
շինարարական	2	14	16
արդձեռ/տրանսկապ/	-	-	-
գյուղատնտեսական	1	2	3
բնութ. պահպանութ.	-	1	1
առևտրի	1	-	1
կենսաթոշակի և նպաստի	4	3	7
առողջապահության	52	96	148
կրթական և մանկ.հիմն	57	23	80
գիտութ.կուլտուրա	-	2	2
ֆինանսական	189	207	396
օրենսդրական	1	1	2
քաղ. և որդեգրման	3	7	10
աշխ.տեղ և հաշվառման	14	20	34
հողհատկացում և հողօգտ.	4	4	8
ապարատային	3	5	8
այլ հարցեր	7	16	23